

**Մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանն ընդունեց ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի /ՄԱԶԾ/  
գլխավոր կառավարիչ-ադմինիստրատոր Հելեն Քլարկին 30.09.2014**

Սեպտեմբերի 30-ին Տավուշի մարզում էր գտնվում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի /ՄԱԶԾ/ գլխավոր կառավարիչ-ադմինիստրատոր Հելեն Քլարկը Հայաստանի Հանրապետությունում ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ Բրեդլի Բուգետոյի ուղեկցությամբ: Մարզի Բագրատաշեն համայնքում պատվիրակությանն ընդունել են Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը և համայնքի ղեկավար Արկադի Մակյանը: Նպատակ ունենալով տեղում ծանոթանալ մարզում ՄԱԶԾ կողմից իրականացվող ծրագրերի ընթացքին և արդյունքներին, Հելեն Քլարկը այցելել է Բագրատաշենի Զարգացման հիմնադրամի կողմից կառավարվող չրի հավաքման կենտրոն, որտեղ լսել է աշխատակիցների կարծիքները, հետևել աշխատանքային գործընթացին: Մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը շնորհակալություն է հայտնել ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի գլխավոր կառավարիչ Հելեն Քլարկին մարզ այցելելու համար, ներկայացրել է ՄԱԶԾ կողմից Տավուշում իրականացվող ծրագրերի ընթացքը, նշել դրանց կարևորությունը մարզի համար և հույս է հայտնել, որ հետագայում նույնպես սերտ համագործակցությունը կշարունակվի: Տիկին Քլարկը գոհունակությամբ նշել է, որ Տավուշի մարզում ՄԱԶԾ –ի կողմից իրականացվող ծրագրերը բարեհաջող ընթացք ունեն և արդյունավետ են: